

1860. — Խաչվառի մը յիշատակարանը.

“Յիշատակ է շարչարանաց պատկեր(ս) սուրբ Լուսաւորիչ Եկեղեցուն Ղալաթիոյ Շապն Ղարապետարցի Անտրիաս գիւղի Ծիղվիթ փողոնն աշխատաւոր Հացադործ եղբարց 1860 Մարտ 1,:

1888. — Վերաշինուած Աւազանին արձանագրութիւնը արաբիկ բարաւորին վրայ: Սեղանս զետեղուած է սպիտակ մարմարէ Ս. Խաչի Հիւսիսային որմին մէջ, Ս. Նիկողայոսի սեղանին քով:

“Ի յիշատակ Գափամաճեան Յարութեան եւ Մաքրուհոյ Տիկնոջ նորուն կողակցի Ջայս աւազան հոգեւոր նոր ծնընդեան. Շինեաց նոցա դուստր հարազատ Իսկուհէ,:

Յիշատակարան մ'ալ կայ 1 մէտր եւ 34 ս. մ. երկայն եւ 62 ս. մ. լայն սպիտակ մարմարի մը վրայ: Մարմարին վերէն ձախ անկիւնը կտրուած է, բայց շատ չէ մնասած միայն (շա-) բառին առաջին վանկը կորսուած է, զոր մենք ենթադրեցինք թէ —ըշաւ կրնայ ըլլալ:

Յիշատակարանս պարզապէս հանելուկ մ'է. միմիայն այս հանելուկ Յիշատակարանը շինողին անունը “ի Մեսրոպ դպրէ ասացեալ բանս” եւ “Պարոն Բարսեղ” եւ “Պարծն Բարսեղ” ծայրանունները կը կարդացուին տողերուն սկիզբնատառերով եւ վերջնատառերով:

Ինձ այնպէս կը թուի թէ կոլոտի վերանորոգած երեք Եկեղեցիներուն յիշատակարանն է այս. մէջտեղինը վեճակէր Իսկ երկու կողմինները փայտածրի:

Ար խոստովանիմ որ բաւական աշխատեցայ այս հանելուկը պարզելու, բայց միշտ խոյս տուաւ իր բռնաղբօսիկ ասացուածներով ու բառերով:

Հետաքրքիրներուն ու պարզողներուն շնորհակալ պիտի ըլլանք.